

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

2021թ. չորրորդ եռամսյակի համար

Բանկի ղեկավարության պատասխանատվությունը

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի («Բանկ») ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք արժանահավատորեն արտացոլում են Բանկի ֆինանսական վիճակը և ֆինանսական գործունեության արդյունքները բոլոր էական առումներով: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման տեսանկյունից Բանկի ղեկավարությունը պատասխանատու է.

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, Խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման և, շեղումների դեպքում, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում դրանց բացահայտման համար,
- ֆինանսական հաշվետվություններն անընդհատության հիմունքով պատրաստելու համար, քանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,
- Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն ապահովող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար, որը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին,
- Իր իրավասությունների սահմաններում Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

Ս. Սարգսյան

Ի. Սեյլանյան



Գլխավոր հաշվապահ /Գլխավոր ֆինանսական տնօրենի տեղակալ՝



Գլխավոր գործադիր տնօրեն



Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՄ») պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշգրիտ են արտացոլում Բանկի ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական վիճակի մասին
 «31» դեկտեմբերի 2021թ.

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
 ՀՀ, ք.Երևան, Տերյան 66

հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	31.12.2021	31.12.2020թ. (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	59,095,112	38,918,509
Բանկերին տրված վարկեր և փոխառվածություններ	5	2,638,161	9,666,154
Ներդրումներ պարտքային արժեթղթերում	6	35,103,522	31,417,813
Ներդրումներ բաժնային արժեթղթերում	7	32,077	32,221
Հանախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	8	153,634,134	143,745,937
Այլ ակտիվներ	9	7,405,647	10,985,673
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		42,944	474,269
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	3,404,677	3,709,047

Ընդամենը ակտիվներ (տես՝ Ծանոթագրություն 1) **261,356,274** **238,949,623**

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ այլ բանկերին	11	6,315,952	13,591,168
Հանախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	12	198,416,816	170,863,821
Ընթացիկ հարկային պարտավորություններ		129,698	0
Հետաձգված հարկային պարտավորություններ		896,028	447,107
Այլ պարտավորություններ	13	8,622,610	10,279,830
Ընդամենը պարտավորություններ		214,381,104	195,181,926

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	14	18,434,350	18,434,350
Զբաղիված շահույթ		28,129,711	24,904,661
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ		117,315	117,315
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ		-28,498	-10,921
Հողի և շենքերի վերագնահատման պահուստ		322,292	322,292
Ընդամենը սեփական կապիտալ		46,975,170	43,767,697

Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ **261,356,274** **238,949,623**

Ծանոթագրություն 1՝ Լրացուցիչ տեղեկատվություն Էյչ-Էս-Բի-Սի Խճմի կողմից տրամադրված վարկերի ծավալների վերաբերյալ.

	31.12.2021	31.12.2020
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի, Լոնդոնի կողմից Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի միջնորդությամբ տրամադրված վարկեր	54,068,305	63,708,734
Ընդամենը վարկեր՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը	207,702,439	207,454,671
Ընդամենը ակտիվներ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը	315,424,579	302,658,357

Գլխավոր գործադիր տնօրեն՝



Ի.Սեյլանյան

Գլխավոր հաշվապահ/Գլխավոր ֆինանսական տնօրենի տեղակալ՝



Ս.Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝

«14» հունվարի 2021թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
 «31» դեկտեմբերի 2021թ.

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
 ՀՀ, ք.Երևան, Տերյան 66

հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	01.10.21- 31.12.21	01.01.21- 31.12.21	01.10.20- 31.12.20	01.01.20- 31.12.20
Տոկոսային եկամուտ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	15	4,035,731	15,095,761	3,491,335	12,700,764
Այլ նմանատիպ եկամուտ	15	16,084	56,985	9,470	71,003
Տոկոսային ծախս	15	-759,717	-2,915,614	-671,291	-2,721,548
Այլ նմանատիպ ծախս	15	-51,911	-103,950	-12,245	-65,850
Տոկոսային և նմանատիպ եկամտի գուտ շահույթ		3,240,187	12,133,182	2,817,269	9,984,369
Վարկային կորստի պահուստի գծով վերադարձ / (ծախս)		-1,878,413	-2,557,307	-1,067,139	-1,750,402
Վարկային կորստի պահուստի գծով ծախսից հետո տոկոսային և նմանատիպ եկամտի գուտ շահույթ		1,361,774	9,575,875	1,750,130	8,233,967
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	16	703,142	2,281,318	638,533	2,479,004
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	16	-161,999	-554,525	-157,179	-636,959
Չուտ եկամուտ ֆինանսական ամսացյալ գործիքներից		-100,886	-771,278	1,003,705	1,247,582
Ներդրումներից գուտ եկամուտ		-2,371	-20,475	-18,693	-13,610
Արտարժույթով առք ու վաճառքից օգուտ հանած վնաս	17	573,423	2,145,339	-545,589	420,932
Այլ գործառնական եկամուտ		91,907	230,384	-51,701	28,252
Աշխատակազմի գծով ծախսեր		-965,233	-3,553,176	-936,534	-3,894,026
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	18	-1,230,725	-5,524,447	-1,135,257	-4,617,945
Շահույթ մինչև հարկումը		269,032	3,809,015	547,415	3,247,197
Շահութահարկի գծով ծախս	19	35,796	-583,965	-538,479	-970,169
ՇԱՀՈՒՑԹ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ		304,828	3,225,050	8,936	2,277,028
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք.					
Հողվածներ, որոնք կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր					
- Տարվա ընթացքում առաջացած գուտ վնաս	19	54,801	-17,577	-106,371	-65,707
Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու որպես շահույթ կամ վնաս					
Հիմնական միջոցների վերագնահատում		0	0	7,861	7,861
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		54,801	-17,577	-98,510	-57,846
ԸՆԴԱՄՏԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ		359,629	3,207,473	-89,574	2,219,182

Գլխավոր գործադիր տնօրեն՝



Ի.Սեյլանյան

Գլխավոր հաշվապահ/Գլխավոր ֆինանսական տնօրենի տեղակալ՝

Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝


«14» հունվարի 2021թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
 «31» դեկտեմբերի 2021թ.

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Տերյան 66

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Բաժնետիրակ ան կապիտալ	Բաժնետոմս ների վրա հիմնված վճարումնե րի պահուստ	Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ	Հողի և շենքերի վերագնահ ատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 1 հունվարի 2020թ.	18,434,350	111,003	54,786	314,431	22,627,633	41,542,203
Տարվա շահույթ	-	-	-	-	2,277,028	2,277,028
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-65,707	7861	-	-57,846
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-65,707	7,861	2,277,028	2,219,182
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	-	6312	-	-	-	6,312
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	18,434,350	117,315	-10,921	322,292	24,904,661	43,767,697
Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.	18,434,350	117,315	-10,921	322,292	24,904,661	43,767,697
Տարվա շահույթ	-	-	-	-	3,225,050	3,225,050
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-17,577	-	-	-17,577
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-17,577	0	3,225,050	3,207,473
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	-	-	-	-	-	0
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	18,434,350	117,315	-28,498	322,292	28,129,711	46,975,170

Գլխավոր գործադիր տնօրեն՝




Ի. Սելյանյան

Գլխավոր հաշվապահ/Գլխավոր ֆինանսական տնօրենի տեղակալ՝



Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝


«14» հունվարի 2021թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Գրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
 «31» դեկտեմբերի 2021թ.

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
 ՀՀ, ք.Երևան, Տեղյան 66

հազ. ՀՀ դրամ	01.01.21-31.12.21	01.01.20-31.12.20
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված	13,998,231	11,876,543
Վճարված տոկոս	-2,945,079	-2,784,069
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	2,425,354	2,248,132
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	-683,219	-662,141
Ամանցյալ գործիքներից ստացված եկամուտ	364,423	438,805
Արտարժույթով կատարված առևտրային գործարքից ստացված եկամուտ	1,833,811	1,707,083
Ստացված գույտ այլ գործառնական եկամուտ	382,162	92,416
Աշխատակազմի ծախսերի գծով վճարումներ	-3,521,811	-4,130,358
Վճարված վարչական ծախսեր	-3,907,338	-3,326,179
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	7,946,534	5,460,232
<i>Չուտ (ած)/նվազում</i>		
-Ներդրումներ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային արժեթղթերում	-1,991	132,174
-Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	6,624,273	8,203,492
-Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-20,756,223	-16,982,957
-Այլ ակտիվներ	775,964	32,973
<i>Չուտ (ած)/նվազում</i>		
-Պարտավորություններ այլ բանկերին	-5,700,276	12,012,383
-Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	38,951,043	-3,537,958
-Այլ պարտավորություններ	-270,661	-641,621
(Գործառնական գործունեությանը օգտագործված)/Գործառնական գործունեությունից ստացված գույտ դրամական միջոցների հոսքեր	27,568,663	4,678,718
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-461,117	-507,831
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից մուտքեր	17,837	1,268
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի ձեռքբերում	-43,648,266	-27,671,382
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի մարում	36,180,779	21,974,264
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի ձեռքբերում	-865,424	-10,373,381
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի մարում	4,875,811	9,184,315
Ներդրումային գործունեությանը օգտագործված գույտ դրամական միջոցների հոսքեր	-3,900,380	-7,392,747
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-3,776,837	2,183,715
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույտ (նվազում)/աճ	19,891,446	-530,314
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	38,461,272	38,991,586
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	58,352,718	38,461,272

Գլխավոր գործադիր տնօրեն՝




Ի. Սեյլանյան

Գլխավոր հաշվապահ/Գլխավոր ֆինանսական տնօրենի տեղակալ՝



Ս. Սարգսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝

«14» հունվարի 2021թ.

1 Ներածություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») գործունեության համար:

Բանկը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Այն հանդիսանում է բաժնետիրական ընկերություն՝ բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «ՀՀ») օրենսդրությանը համապատասխան:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի սեփականատերերն են եղել Էյչ-Էս-Բի-Սի Յուրբի Բի Վի (70%) և Ուինգս Բատալիշչենթ (30%) կազմակերպությունները: 2021թ. սեպտեմբերի 17-ին Բանկի սեփականատերերի կազմում տեղի է ունեցել փոփոխություն, որի արդյունքում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի 100% սեփականատերն է հանդիսանում Էյչ-Էս-Բի-Սի Յուրբի Բի Վի կազմակերպությունը: 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մայր կազմակերպությունն է Էյչ-Էս-Բի-Սի Յուրբի Բի Վի-ն: Բանկի վերջնական վերահսկող կողմն է Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս ՓԻ-ԷԼ-ՍԻ-ն:

Հիմնական գործունեությունը. Բանկը տրամադրում է ֆինանսական և բանկային ծառայություններ ՀՀ-ում: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից 1995 թվականից տրված բանկային լիցենզիայի հիման վրա:

Բանկն ունի 6 մասնաճյուղ և մեկ գործառնական կենտրոն (2020թ.-ին՝ 8 մասնաճյուղ և մեկ գործառնական կենտրոն): Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին քանակը կազմում էր 313 (2020թ.-ին՝ 352):

Բանկը 2021թ. հուլիսի 1-ից դադարեցրել է ք. Երևան 0062՝ Գայի պողոտա 19/10 հասցեում գտնվող «Նոր Նորք» մասնաճյուղի գործունեությունը, իսկ 2021թ. նոյեմբերի 29-ից՝ ք. Երևան, 0014, Շ. Ներսիսյան 1 հասցեում գտնվող «Ձեյթուն» մասնաճյուղի գործունեությունը՝ կապված բանկային ծառայություններից օգտվելու հեռահար եղանակների ընդլայնման, ինչպես նաև դրանց նկատմամբ հաճախորդների նախընտրությունների ավելացման հետ:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 0009, ք.Երևան, Տերյան փողոց 66:

Ներկայացման արժույթ. Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (դրամ), եթե այլ բան նշված չէ:

2 Բանկի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետությունը դրսևորում է զարգացող շուկային բնորոշ որոշակի բնութագրեր: Իրավական, հարկային և կարգավորող շրջանակները շարունակում են զարգանալ և ենթակա են հաճախակի փոփոխությունների և տարբեր մեկնաբանությունների: Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էականորեն ազդում է Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը և Ռուսաստանից դեպի Հայաստան կանխիկի նշանակալի հոսքերը: Հետևաբար, տարածաշրջանում շարունակվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, ֆոնդային շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնությունում առկա այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ հատվածների վրա:

COVID-19. 2020 թվականի մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը հայտարարեց համաշխարհային համաճարակ: Ի պատասխան համաճարակի, Հայաստանի իշխանությունները COVID-19-ի տարածումն ու ազդեցությունը զսպելու նպատակով բազմաթիվ միջոցառումներ են իրականացրել, ինչպիսիք են ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ապաստարանների պատվերները և բիզնեսի գործունեության սահմանափակումները, ներառյալ դադարեցումը:

2 Բանկի գործառնական միջավայրը (շարունակություն)

Այս միջոցառումները, ի թիվս այլ գործոնների, խիստ սահմանափակել են տնտեսական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, նաև բացասաբար են ազդել և կարող են շարունակել անորոշ ժամանակով բացասական ազդեցություն թողնել բիզնեսի, շուկայի մասնակիցների, Բանկի հաճախորդների, ինչպես նաև Հայաստանի և համաշխարհային տնտեսության վրա:

Պատերազմը Լեռնային Ղարաբաղում և դրա հետևանքները. 2020 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում պատերազմ սկսվեց և շարունակվեց մինչև 2020 թվականի նոյեմբեր, երբ համաձայնագիր ստորագրվեց Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների կողմից: Ըստ համաձայնագրի, Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող մի շարք տարածքներ փոխանցվեցին Ադրբեջանին, և տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերը պետք է ապաշրջափակվեն: Տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման վերաբերյալ որոշումներ ներկայումս մշակվում են փորձագիտական խմբերի կողմից: Այս բոլոր իրադարձություններն ու գործողությունները էապես ազդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Նշված իրադարձությունները Բանկի գործունեության վրա էականորեն չեն ազդել: Իրացվելիության և կապիտալի դիրքերի վերաբերյալ մեր վերլուծության արդյունքները մի շարք հավանական ռիսկի սցենարների ներքո, ներառյալ տնտեսական միջավայրի բավական երկարաժամկետ փակուղի մտնելը և տեղական արժույթի ողջամիտ արժեզրկումը, վստահեցնում են մեզ, որ Բանկը ի վիճակի է դիմակայելու հնարավոր ցնցումներին:

Ներկայիս տնտեսական իրավիճակի և Կառավարության ձեռնարկած միջոցառումների հետագա հետևանքները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

Ակնկալվող վարկային կորուստ. Ակնկալվող վարկային կորուստը (ԱՎԿ) չափելու համար Բանկն օգտագործում է հիմնավորվող կանխատեսական տեղեկատվություն, այդ թվում՝ մակրոտնտեսական փոփոխականների կանխատեսումները: Ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսման դեպքում, կանխատեսումներն ու դրանց առաջացման հավանականությունը ենթակա են իրենց բնորոշ անորոշության բարձր աստիճանի, ուստի փաստացի արդյունքները կարող են նշանակալիորեն տարբերվել կանխատեսումներից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման, հողի և շենքերի, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (ԻԱՇՎՄ) և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (ԻԱԱՀԱՄ) չափվող ֆինանսական գործիքների: Այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ օգտագործվող հաշվապահական հիմնական քաղաքականությունները ներկայացված են ստորև: Այս քաղաքականությունները վերաբերում են ներկայացված բոլոր ժամանակաշրջաններին, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական գործիքների դասակարգումը, չափման հիմնական մոտեցումներ. Կախված դասակարգումից ֆինանսական գործիքները չափվում են իրական արժեքով կամ ամորտիզացված արժեքով, ստորև ներկայացված սահմանումներին համապատասխան:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց: Իրական արժեքի լավագույնն ապացույցն է ակտիվ շուկայում գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար: Ակտիվ շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և կազմակերպության կողմից պահվող քանակի արտադրյալը: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առք ու վաճառքի ծավալը բավարար չէ պահվող քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնորոշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարներն ու կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերն ու վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատուների հավելավճարներն ու զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն (ԱԱ) այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեգրկման վնասի գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա վարկային կորուստները) զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի գուտ հաշվեկշռային արժեքը:

Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարզևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփռեղը: Այդպիսի պարզևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Ակտիվների համար, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ գնված կամ ստեղծված արժեգրկված են, արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է վարկային ռիսկի համար, այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ այն հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ պայմանագրով սահմանված վճարների փոխարեն:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում. ԻԱՇՎՄ-ով չափվող Ֆինանսական գործիքները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Բոլոր այլ ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը լավագույնս ներկայացվում է գործարքի գնով: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ԱԱ-ով և ԻԱԱՀԱՄ-ով չափվող պարտքայի գործիքների գծով ճանաչվում է ԱՎԿ՝ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների բոլոր գնումներն ու վաճառքներն այնպիսի պայմանագրի համաձայն, որի պայմանները պահանջում են ակտիվի մատակարարում համապատասխան շուկայում գործող կարգավորմամբ կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում («կանոնավոր կերպով» առք ու վաճառք), գրանցվում են առք ու վաճառքի ամսաթվով, որն այն ամսաթիվն է, երբ Բանկը պարտավորվում է հանձնել ֆինանսական ակտիվը: Բոլոր այլ գնումները ճանաչվում են, երբ կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներ – դասակարգումը և հետագա չափումը - չափման կատեգորիաներ. Բանկը դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ չափման կատեգորիաներով՝ ԻԱՇՎՄ, ԻԱԱՀԱՄ և ԱԱ: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է (i) ակտիվների պորտֆելի կառավարման համար Բանկի բիզնես մոդելից և (ii) ակտիվի գծով դրամական միջոցների հոսքերի բնույթից:

Ֆինանսական ակտիվներ - դասակարգումը և հետագա չափումը - բիզնես մոդել. Բիզնես մոդելն արտացոլում է Բանկի կողմից ակտիվների կառավարման համար կիրառվող մեթոդը՝ դրամական միջոցների հոսքերի գեներացման նպատակով: Արդյոք Բանկի նպատակն է՝ (i) ակտիվներից բացառապես ստանալ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր («ակտիվների պահում՝ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման համար») կամ (ii) պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի հավաքագրում, և ակտիվների վաճառքի արդյունքում առաջացած դրամական միջոցների հոսքերի հավաքագրում («ակտիվների պահում՝ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի համար») կամ այն դեպքում, երբ կիրառելի չէ (i)-ը կամ (ii)-ը, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «այլ» բիզնես մոդելի մաս և չափվում են ԻԱՇՎՄ-ով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործունեության բոլոր համապատասխան ապացույցների վրա, որոնք Բանկը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար: Այն գործոնները, որոնք Բանկի կողմից հաշվի են առնվում բիզնես մոդելի սահմանման ժամանակ, ներառում են պորտֆելի նպատակը և կազմը, համապատասխան ակտիվների գծով դրամական հոսքերի ստացման նախկին փորձը, ռիսկերի գնահատման և կառավարման մոտեցումները, ակտիվների եկամտաբերության գնահատման մեթոդները և ղեկավարների վճարման սխեման:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Բանկը գնահատում է, արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացված են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ (ՄՄԳՏՎ): Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են ՄՄԳՏՎ-ի հատկանիշներին:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Նման գնահատումն իրականացնելիս Բանկը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն վարկային ռիսկի, փողի ժամանակային արժեքի, այլ բազային վարկային ռիսկերի և շահույթի մարժայի փոխհատուցումը:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է ԻԱՇՎՄ-ով: ՄՄԳՏՎ-ի գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվներ – վերադասակարգում. Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ամբողջ պորտֆելի կառավարման բիզնես մոդելը փոխվում է: Վերադասակարգումն ունի առաջընթաց ազդեցություն և տեղի է ունենում բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակահատվածից սկսած:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում – ԱՎԿ-ի համար վարկային կորստի պահուստ. Բանկն ԱԱ-ով չափվող և ԻԱԱՀԱՄ-ով չափվող պարտքային գործիքները և վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի հետ կապված ԱՎԿ-ն գնահատում է կանխատեսական գնահատման հիման վրա: Բանկը չափում է ԱՎԿ-ն և ճանաչում է վարկային կորուստների պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: ԱՎԿ-ի չափումն արտացոլում է՝ (i) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելով, (ii) փողի ժամանակային արժեքի և (iii) անցյալի իրադարձությունների, ընթացիկ պայմանների և ապագա պայմանների կանխատեսումների մասին ողջամիտ ու օժանդակ տեղեկությունների միջոցով, որոնք հասանելի են առանց որևէ անհարկի ծախսերի և ջանքերի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

ԱԱ-ով չափվող պարտքային գործիքները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ԱՎԿ-ի պահուստի գումարը: Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների ԱՎԿ-ի գծով ճանաչվում է առանձին պահուստ՝ որպես պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ: ԻԱԱՀԱՄ-ով չափվող պարտքային գործիքների համար ամորտիզացված արժեքի փոփոխությունները, հանած՝ ԱՎԿ-ի գծով պահուստը, ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ արդյունքում՝ որպես չափվող պարտքային գործիքների գծով օգուտներ՝ հանած վնասներ:

Բանկը կիրառում է արժեզրկման եռափուլ մոդել, որը հիմնված է սկզբնական ճանաչումից ի վեր վարկային որակի փոփոխությունների վրա: Ֆինանսական գործիքը, որը սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված չէ, դասակարգվում է Փուլ 1-ում: Փուլ 1-ում ներառված ֆինանսական ակտիվների ԱՎԿ-ն չափվում է ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ-ի՝ այն մասնաբաժնի գումարին հավասար, որն իրենից ներկայացնում է առաջիկա 12 ամիսների կամ մինչև պայմանագրային մարման ժամկետն ընկած հնարավոր դեֆոլտի իրադարձությունների արդյունքը, եթե ժամկետն ավելի կարճ է (12 ամիսների ԱՎԿ): Եթե Բանկը հայտնաբերում է վարկային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, ակտիվը տեղափոխվում է 2-րդ փուլ և դրա ԱՎԿ-ն չափվում է հիմնվելով ԱՎԿ-ի ամբողջ ժամկետի ընթացքի հիման վրա, այսինքն՝ մինչև պայմանագրի ժամկետի ավարտը, սակայն հաշվի առնելով ակնկալվող կանխավճարները, եթե այդպիսիք կան (ԱՎԿ ամբողջ ժամկետի ընթացքում): Եթե Բանկը որոշում է, որ ֆինանսական ակտիվն արժեզրկված է, ֆինանսական ակտիվը տեղափոխվում է 3-րդ փուլ և ԱՎԿ-ն չափվում է որպես ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ: Գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվների համար ԱՎԿ-ն միշտ չափվում է որպես ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

ԱՎԿ-ների մոդելն օգտագործվում է մեծածախ և մանրածախ վարկային պորտֆելների արժեզրկման պահուստի հաշվարկման համար: Այս մոդելի համաձայն, ֆինանսական գործիքները բաժանվում են երեք ենթապորտֆելի, որոնք այսուհետ կոչվում են փուլեր, կախված գործիքների վարկային ռիսկի նշանակալի աճից՝ սկզբնական ճանաչումից ի վեր: ԱՎԿ պահուստներն ու մեծածախ պորտֆելները հաշվարկվում են 1-ին փուլի և 2-րդ փուլի ֆինանսական գործիքների համար նախատեսված հավաքական մոդելի հիման վրա և անհատական գնահատման հիման վրա՝ 3-րդ փուլի ֆինանսական գործիքների համար, որոնք չեն արժեզրկվել սկզբնական ճանաչման ժամանակ և ձեռք են բերվել կամ առաջացել վարկերի արժեզրկումից: Արժեզրկման հաշվարկը կատարվում է գործիքի մակարդակով:

Մանրածախ ԱՎԿ մեթոդաբանությունն իրականացվում է բոլոր փուլերի համար հավաքական հիմունքներով:

Առաջարկվող մոդելը բաղկացած է երեք փուլերից, որոնք արտացոլում են ֆինանսական գործիքի վատթարացման ընդհանուր պատկերը, որը, ի վերջո, հանգեցնում է պարտավորությունների դեֆոլտի:

- Փուլ 1՝ ոչ արժեզրկված գործիքներ, որոնց համար առկա չէ վարկային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր (որակյալ պորտֆել):
- Փուլ 2՝ ոչ արժեզրկված գործիքներ, որոնց համար առկա է վարկային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր (վատորակ պորտֆել):
- Փուլ 3՝ արժեզրկված գործիքներ, որոնց համար տեղի է ունեցել փաստացի դեֆոլտի իրադարձություն (կամ իրադարձություններ) (արժեզրկված պորտֆել):

Գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվների համար ԱՎԿ-ն միշտ չափվում է որպես ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ:

ԱՎԿ-ն պետք է հաշվարկվի, օգտագործելով փոքր պորտֆելի մոտեցումը բոլոր մանրածախ պորտֆելների համար, բացառությամբ վարկային քարտերի պորտֆելից: Վարկային քարտերի համար կիրառվում է միավորված ռիսկի հիման վրա (սեզմենտի մակարդակով) մոտեցում:

Մեծածախ պորտֆելների գծով ԱՎԿ-ի հաշվարկի համար մշակվել է ժամանակի որոշակի պահին դեֆոլտի հավանականության և ժամանակի որոշակի պահին դեֆոլտով պայմանավորված կորստի մոդելավորման երեք մոդել՝ Մուվերեն, Բանկեր և Կորպորատիվ:

Արժեզրկման պահուստը պետք է արտացոլի 12 ամիսների ԱՎԿ-ն կամ ամբողջ ժամանակի ընթացքի ԱՎԿ-ն՝ կախված նրանից, թե ակտիվի վարկային ռիսկը նշանակալի աճել է սկզբնական ճանաչման պահից:

Ֆինանսական ակտիվներ - դուրսգրում. Ֆինանսական ակտիվները դուրս են գրվում ամբողջությամբ կամ մասնակի, երբ Բանկը սպառել է ակտիվների հատուցման գործնական վերականգնման ջանքերը, և եկել է այն եզրակացության, որ առկա չէ հատուցման ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ապաճանաչման իրադարձություն: Բանկը կարող է դուրս գրել այն ֆինանսական ակտիվները, որոնք դեռ ենթակա են հարկադիր կատարման, երբ Բանկը ձգտում է ձեռք բերել պայմանագրով նախատեսված գումարները, սակայն ողջամիտ ակնկալիքներ այդ հատուցման վերաբերյալ չկան:

Ֆինանսական ակտիվներ - ապաճանաչում. Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Բանկը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ - փոփոխություն. Երբեմն Բանկը վերանայում կամ որևէ այլ կերպ փոփոխում է ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները: Բանկը գնահատում է, արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերի փոփոխությունն էական է, հաշվի առնելով, ի թիվս այլ գործոնների, նաև հետևյալը՝ ցանկացած նոր պայմանագրային պայման, որն էապես ազդում է ակտիվի ռիսկի վրա (օրինակ՝ շահույթի մասնաբաժին կամ սեփական կապիտալի շահութաբերություն), տոկոսադրույքի էական փոփոխություն, արտարժույթի փոփոխություն, նոր գրավ կամ վարկային բարելավում, որը զգալիորեն ազդում է ակտիվի հետ կապված վարկային ռիսկի վրա, կամ վարկի զգալի երկարաձգում, երբ վարկառուն չունի ֆինանսական դժվարություններ:

Եթե փոփոխված պայմաններն էականորեն տարբերվում են, ապա ի սկզբանե ճանաչված ակտիվից դրամական միջոցների հոսքերի նկատմամբ իրավունքներն ավարտվում են, և Բանկը ապաճանաչում է սկզբնապես ճանաչված ֆինանսական ակտիվը և ճանաչում է նոր ակտիվն իր իրական արժեքով: Հետագա արժեզրկման հաշվարկի, ինչպես նաև վարկային ռիսկի նշանակալի աճի սահմանման համար՝ վերաբանակցման ամսաթիվը համարվում է սկզբնական ճանաչման ամսաթիվ: Բանկը նաև գնահատում է, արդյոք նոր վարկային կամ պարտքային գործիքը համապատասխանում է ՄՄԳՏՎ-ի չափանիշին: Ի սկզբանե ճանաչված և ապաճանաչված ակտիվի հաշվեկշռային արժեքի և նոր էականորեն փոփոխված ակտիվի իրական արժեքի միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե միայն այդ տարբերության էությունը կապված չէ սեփականատերերի հետ կապիտալ գործարքի հետ:

Այն դեպքում, երբ վերաբանակցումը պայմանավորված է կոնտրագենտի ֆինանսական դժվարություններով և սկզբնապես համաձայնեցված վճարումները կատարելու անհնարինությամբ, Բանկը սկզբնական և վերանայված դրամական միջոցների հոսքերը համեմատում է ակտիվների հետ, անկախ նրանից, թե պայմանագրի փոփոխության արդյունքում ակտիվներից ռիսկերն ու հատույցներն էականորեն տարբերվում են, թե ոչ: Եթե ռիսկերն ու հատույցները չեն փոփոխվում, փոփոխված ակտիվն էապես չի տարբերվում իր սկզբնական ակտիվից և փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչմանը: Բանկը վերահաշվարկում է համախառն հաշվեկշռային արժեքը՝ զեղչելով փոփոխված պայմանագրային դրամական միջոցների հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (վարկի գծով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով՝ գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվների համար) և ճանաչում է շահույթի կամ վնասի փոփոխությունը շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական պարտավորություններ - չափման կատեգորիաներ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ԱԱ-ով չափվող, բացառությամբ (i) ֆինանսական պարտավորությունների, որոնք չափվում են ԻԱՇՎՄ-ով. տվյալ դասակարգումը կիրառվում է ածանցյալ ֆինանսական գործիքների, այլ ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք նախորոշվել են որպես այդպիսին սկզբնական ճանաչման ժամանակ; և (ii) ֆինանսական երաշխիքի պայմանագրերի և վարկային պարտավորությունների:

Ֆինանսական պարտավորություններ – ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարված են (այսինքն, երբ պայմանագրում նշված պարտավորությունը կատարվել է, չեղյալ է հայտարարվել կամ դրա գործողության ժամկետը լրացել է):

Բանկի և նրա սկզբնական պարտատերերի միջև պարտքային գործիքների փոխանակումն էականորեն տարբերվող պայմաններով, ինչպես նաև գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների պայմանների էական փոփոխությունները հաշվառվում են որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Պայմանները զգալիորեն տարբերվում են, եթե դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, համաձայն նոր պայմանների, ներառյալ ցանկացած վճար՝ հանած ցանկացած ստացված վճարներ և զեղչելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10%-ով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճանաչվում են շահույթ կամ վնաս մարումից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Եթե փոխանակումը կամ փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը ու ամորտիզացվում են փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

Պարտավորությունների փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում մարման, հաշվառվում են որպես դատողության փոփոխություն՝ օգտագործելով կուտակային փոխարկման մեթոդն, ընդ որում, ցանկացած շահույթ կամ վնաս ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե հաշվեկշռային արժեքի տարբերության տնտեսական էությունը չի վերաբերում սեփականատերերի հետ կապիտալի գործարքին:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքներն այն միավորներն են, որոնք անմիջապես փոխարկելի են կանխիկի որոշակի գումարի և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են թղթադրամներն ու մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստային ավանդները, անսահմանափակ մնացորդները (ընթացիկ հաշիվները, օվերնայթ տեղաբաշխումները և ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում տեղաբաշխված ավանդներ, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրվանից երեք ամսից պակաս է): Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է սկզբնավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ԱԱ-ով, քանի որ (i) դրանք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը ստանալու նպատակով, և այդ դրամական հոսքերը ՄՄԳՏԿ-ն են, և (ii) դրանք չեն նախորոշվում որպես ԻԱՇՎՄ-ով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված վճարներն ու մուտքերն իրենցից ներկայացնում են Բանկի դրամական միջոցների և դրանց համարժեքների փոխանցումները, ներառյալ Բանկում առկա՝ Բանկի գործընկերների ընթացիկ հաշիվներին ծախսագրված կամ կրեդիտագրված գումարները, ինչպիսիք են վարկի հիմնական գումարի կամ տոկոսային եկամտի հավաքագրումը՝ հաճախորդի ընթացիկ հաշվի ծախսագրման միջոցով, տոկոսային վճարները կամ վարկի գումարի տրամադրումը՝ գործընկերոջ ընթացիկ հաշվի կրեդիտագրման միջոցով, ինչը ներկայացնում է դրամական միջոցներ կամ դրանց համարժեքներ՝ գործընկերոջ տեսանկյունից:

ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր դրամական միջոցներ. ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր դրամական միջոցները հաշվառվում են ԱԱ-ով և հանդիսանում են ոչ տոկոսակիր միջոցներ, որոնք հասանելի չեն Բանկի ամենօրյա գործառնությունների ֆինանսավորման համար և, հետևաբար, հաշվի չեն առնվում դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմում՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակների համար:

Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ. Բանկերին տրամադրված վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են, երբ Բանկը թղթակից բանկերին տրամադրում է դրամական միջոցներ: Բանկերին տրամադրված վարկերը և փոխատվությունները հաշվարկվում են ԱԱ-ով, երբ (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման նպատակով, և այդ դրամական հոսքերը հանդիսանում են ՄՄԳՏԿ, և (ii) դրանք չեն նախորոշվել որպես ԻԱՇՎՄ-ով չափվող:

Ներդրումներ պարտքային արժեթղթերում. Բիզնես մոդելի և դրամական միջոցների հոսքերի բնույթի հիման վրա, Բանկը դասակարգում է պարտքային արժեթղթերում ներդրումները որպես ԱԱ-ով, ԻԱԱՀԱՄ-ով և ԻԱՇՎՄ-ով չափվող: Պարտքային արժեթղթերը չափվում են ԱԱ-ով, եթե դրանք պահվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման համար, եթե այդ դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են ՄՄԳՏԿ, և եթե դրանք կամավոր նախորոշված չեն որպես ԻԱՇՎՄ-ով՝ հաշվապահական անհամապատասխանություններն էականորեն նվազեցնելու նպատակով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Պարտքային արժեթղթերը հաշվառվում են ԻԱԱՀԱՄ-ով, եթե դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և վաճառելու համար, որտեղ այդ դրամական միջոցների հոսքերը ՄՄԳՏՎ-ներ են և վերջիններս նախորոշված չեն որպես ԻԱՇՎՄ-ով չափվող: Այս ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով և ճանաչվում է շահույթում կամ վնասում: Արժեզրկման պահուստը գնահատվում է օգտագործելով ակնկալվող վարկային կորուստների մոդելը և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Հաշվեկշռային արժեքի բոլոր այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ արդյունքում: Երբ պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, այլ համապարփակ արդյունքում նախկինում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է այլ համապարփակ արդյունքից շահույթ կամ վնաս:

Պարտքային արժեթղթերում ներդրումները հաշվառվում են ԻԱՇՎՄ-ում, եթե դրանք չեն համապատասխանում ԱԱ-ի կամ ԻԱԱՀԱՄ-ի չափանիշներին: Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ կարող է կատարել նաև ԻԱՇՎՄ-ի անշրջելի ընտրություն, եթե այդ տարբերակի կիրառումն էականորեն նվազեցնում է ֆինանսական ակտիվների և տարբեր հաշվառման հիմքերով ճանաչվող կամ գնահատվող պարտավորությունների միջև հաշվապահական անհամապատասխանությունները:

Ներդրումներ բաժնային արժեթղթերում. Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են թողարկողի տեսանկյունից սեփական կապիտալի սահմանմանն, այսինքն՝ այն գործիքները, որոնք չեն պարունակում դրամական միջոցների վճարման պայմանագրային պարտավորություններ և դրանք վկայում են թողարկողի գուտ ակտիվներում մնացորդային բաժնի նկատմամբ իրավունքի մասին, համարվում են Բանկի կողմից ներդրումներ բաժնային արժեթղթերում:

Ներդրումները բաժնային արժեթղթերում չափվում են ԻԱՇՎՄ-ով, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը նախորոշում է սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ներդրումներն անշրջելիորեն նախորոշել ԻԱԱՀԱՄ-ով: Բանկի քաղաքականությունն է բաժնային արժեթղթերում ներդրումները նախորոշել որպես ԻԱԱՀԱՄ, երբ այդ ներդրումները պահվում են ռազմավարական նպատակների համար, բացառությամբ այն ներդրումները, որոնք նախատեսված են բացառապես շահույթ ստանալու համար: Այն դեպքում, երբ օգտագործվում է ԻԱԱՀԱՄ-ի ընտրությունը, իրական արժեքի շահույթն ու վնասը ճանաչվում է այլ համապարփակ արդյունքում և հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այդ թվում՝ օտարման դեպքում: Արժեզրկման վնասները և դրանց հակադարձումները, եթե այդպիսիք կան, իրական արժեքի այլ փոփոխություններից առանձին չեն չափվում: Շահաբաժինները շարունակում են ճանաչվել շահույթում կամ վնասում, երբ վճարումներ ստանալու Բանկի իրավունքը սահմանվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ներկայացնում են ներդրումների վերականգնում, այլ ոչ թե հատույց:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ. Հաճախորդներին տրամադրված վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են, երբ Բանկը դրամական միջոցներ է տրամադրում՝ վճարման ենթակա դրամական միջոցները սկզբնավորելու կամ գնելու համար: Բիզնես մոդելի և դրամական միջոցների հոսքերի բնույթի հիման վրա, Բանկը դասակարգում է վարկերը և փոխատվությունները որպես ԱԱ-ով չափվող վարկեր, որոնք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման համար և այդ դրամական միջոցների հոսքերը ներկայացնում են ՄՄԳՏՎ, և վարկեր, որոնք կամավոր նախորոշվում են ԻԱՇՎՄ-ով չափվող:

Արժեզրկման պահուստները որոշվում են կանխատեսական ԱՎԿ մոդելների հիման վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Բռնագանձված գրավ. Բռնագանձված գրավն իրենից ներկայացնում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից ձեռք են բերվել ժամկետանց վարկերի մարման նպատակով: Ակտիվները ձեռք բերման ժամանակ սկզբնապես գրանցվում են իրական արժեքով և ներառվում են հիմնական միջոցներում, այլ ֆինանսական ակտիվներում, ներդրումային գույքի կազմում կամ այլ ակտիվների կազմում որպես պաշարներ՝ կախված իրենց բնույթից, ինչպես նաև այդ ակտիվների վերականգնման վերաբերյալ Բանկի մտադրությունից: Հետագայում դրանք վերաչափվում են համապատասխան արժեքով ու հաշվառվում են համաձայն այդ ակտիվների կատեգորիաների հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Վարկ տալու հանձնառություններ. Բանկը թողարկում է վարկեր տալու հանձնառություններ: Այդ հանձնառություններն անհետկանչելի կամ հետկանչելի են միայն էական անբարենպաստ փոփոխության դեպքում: Այդ հանձնառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը սովորաբար հաստատվում է ստացված գումարով:

Այդ գումարն ամորտիզացվում է գծային մեթոդով հանձնառության ժամկետի ընթացքում, բացառությամբ վարկերի տրամադրման հանձնառությունների, եթե հավանական է, որ Բանկը կնքելու է կոնկրետ վարկային համաձայնագիր և չի ակնկալում վաճառել ստացված վարկն անմիջապես ստանալուց հետո: Նման վարկային հանձնառությունների գծով վճարները հետաձգվում են և սկզբնական ճանաչման ժամանակ ներառվում են վարկի հաշվեկշռային արժեքի մեջ: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում հանձնառությունները չափվում են ըստ (i) սկզբնական ճանաչման գումարի չամորտիզացված մնացորդի, գումարած (ii) ԱՎԿ-ի մոդելի հիման վրա որոշվող վնասների գծով պահուստի գումարը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնառությունը շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելն է, և այդ դեպքում գնահատումն իրականացվում է այդ երկու գումարներից ավելի բարձր գումարով: Վարկ տալու հանձնառության հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է պարտավորություն: Այն պայմանագրերը, որոնք ներառում են ինչպես վարկ, այնպես էլ չստացված հանձնառություն, և այն դեպքում, երբ Բանկը չի կարող տարբերակել ԱՎԿ-ն ըստ վարկի և չստացված հանձնառության բաղադրիչի, չստացված հանձնառության ԱՎԿ-ն ճանաչվում է վարկի գծով արժեզրկման պահուստի հետ միասին:

Երբ համակցված ԱՎԿ-ների գումարը գերազանցում է վարկի համախառն հաշվեկշռային արժեքը, նրանք ճանաչվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական երաշխիքներ. Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում: Ֆինանսական երաշխիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը սովորաբար հաստատվում է ստացված գումարով: Այդ գումարն ամորտիզացվում է գծային մեթոդով երաշխիքի ժամկետի ընթացքում: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, երաշխիքները չափվում են որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը (i) ակնկալվող կորուստների մոդելով հաշվարկված երաշխավորված մնացորդի գծով արժեզրկման պահուստի գումարը և (ii) սկզբնապես ճանաչված գումարի չամորտիզացված մնացորդը: Բացի այդ, ԱՎԿ-ի պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվ ճանաչված՝ վճարների գծով ստացվելիք գումարների համար:

Կատարման երաշխիքներ. Կատարման երաշխիքներն այն պայմանագրերն են, որոնք տրամադրում են փոխհատուցում, եթե մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունները: Այդպիսի պայմանագրերը փոխանցում են ոչ ֆինանսական գործունեության ռիսկերն ի հավելումն վարկային ռիսկերի: Կատարման երաշխիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը սովորաբար հաստատվում է ստացված գումարով: Այդ գումարն ամորտիզացվում է գծային մեթոդով երաշխիքի ամբողջ ժամկետի ընթացքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կատարման երաշխիքները չափվում են որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը (i) սկզբնապես ճանաչված գումարի չմաշված մնացորդը և (ii) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին՝ պայմանագրի մարման գծով ծախսի լավագույն կանխատեսման գումարը: Այն դեպքում, երբ Բանկն ունի պայմանագրային իրավունք դիմելու իր հաճախորդին կատարման երաշխիքի պայմանագրերի գծով վճարված գումարների վերականգնման համար, այդ գումարները կճանաչվեն որպես ակտիվ՝ պարտապանի շահառուին վնասները փոխհատուցման պահին: Այս վճարները ճանաչվում են որպես կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ շահույթում կամ վնասում:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր. Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո պայմանագրեր»), որոնք ըստ էության ենթադրում են պարտատիրոջ եկամտաբերության տրամադրումը կոնտրագենտին, հաշվառվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Նմանատիպ վաճառքի և հետգնման պայմանագրերի ներքո վաճառվող արժեթղթերը չեն ապաճանաչվում: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արժեթղթերը վերադասակարգվում են որպես հետգնման դեբիտորական պարտքեր, եթե ստացողն ունի պայմանագրային իրավունք կամ գործառնական ավանդույթի համաձայն իրավունք վաճառել կամ վերագրավադրել արժեթղթերը: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է այլ բանկերին կամ այլ փոխառու միջոցներին վճարվելիք գումարներում:

Վերավաճառքի պայմանագրով («հակադարձ ռեպո պայմանագրեր») ձեռք բերված արժեթղթերը, որոնք ըստ էության տրամադրում են եկամտաբերություն Բանկին, գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ բանկերին տրված վարկեր և փոխատվություններ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ հոդվածներում ըստ կիրառելիության: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել կոնտրագենտներին ֆիքսված վճարների դիմաց, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են հաշվառվել իրենց սկզբնական կատեգորիայում, այնքան ժամանակ, որքան գնորդն ունի պայմանագրային կամ ավանդույթի համաձայն իրավունք վաճառել կամ վերագրավադրել արժեթղթերը, որի դեպքում դրանք վերադասակարգվում են և ներկայացվում են առանձին: Ֆիքսված վճարով փոխառությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այնքան ժամանակ, մինչև դրանք կվաճառվեն երրորդ անձանց, որի դեպքում առքն ու վաճառքը հաշվառվում են առևտրային տարվա շահույթում կամ վնասում արժեթղթերից առաջացած գուտ արդյունք հոդվածում: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունն արտացոլվում է իրական արժեքով՝ այլ փոխառու միջոցներ հոդվածում:

Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերի դասակարգման հիման վրա, Բանկը դասակարգում է հետգնման գծով ստացվելիք գումարները հետևյալ չափման կատեգորիաներից մեկում՝ ԱԱ, ԻԱԱՀԱՄ և ԻԱՇՎՄ:

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ. Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ հողի և շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Վերագնահատում: Հողը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների շարժից: Երբ հողի կամ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ ուղղակիորեն սեփական կապիտալում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ հողի կամ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Մակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Հողի և շենքերի իրական արժեքը գնահատելու համար դեկավարությունն օգտվում է անկախ գնահատող ընկերությունների ծառայություններից: Գնահատող ընկերությունները կիրառում են եկամտային մոտեցումը և համադրելի վաճառքների մոտեցումը՝ կախված տեղեկատվության մատչելիությունից և հուսալիությունից:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում դեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հայտանիշ: Եթե որևէ նման հայտանիշ գոյություն ունի, դեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այն չափով, որքանով այն գերազանցում է նախկին վերագնահատումից աճը սեփական կապիտալում: Նախորդ տարիներում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխություններ են տեղի ունեցել գնահատումներում, որոնք կիրառվել են ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը որոշելու համար:

Մաշվածություն: Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված գույքի բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- շենքեր 20 տարի
- վարձակալված գույքի բարելավումներ մինչև 10 տարի
- սարքավորումներ և հարմարանքներ 4-ից 7 տարի
- օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Օգտակար կյանքի և հիմքում ընկած վարձակալության ժամկետի նվազագույնը

Ոչ նյութական ակտիվներ: Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման կապիտալ ծախսերը ներառում են առանձին ծրագրերի ձեռքբերման և դրանց ներդրման ծախսերը: Ոչ նյութական ակտիվների գծով կատարած հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ ավելացնում են այն ակտիվի ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Համակարգչային ծրագրերի զարգացման կամ պահպանման ծախսերը ճանաչվում են որպես ծախս՝ կատարվելու ժամանակ: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- համակարգչային ծրագրեր 3-ից 5 տարի
- այլ 10 տարի

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Բանկի կողմից վարձակալության հաշվառումը՝ որպես վարձակալ. Բանկը վարձակալում է գրասենյակային տարածքներ: Վարձակալության գծով ճանաչվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և համապատասխան արտավորություն այն ամսաթվի դրությամբ, որում վարձակալված ակտիվը հասանելի է Բանկի օգտագործման համար: Վարձավճարներից յուրաքանչյուրը բաշխվում է պարտավորության և ֆինանսական ծախսի միջև: Ֆինանսական ծախսը ճանաչվում է շահույթ կամ վնասում վարձակալման ժամանակաշրջանում այնպես, որ ցանկացած ժամանակահատվածում պարտավորության մնացած մասի վրա առաջացնի հաստատուն պարբերական տոկոսադրույք: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ճանաչվում է սկզբնական արժեքով և համաչափ մաշվում է ակտիվի օգտակար կյանքի և վարձակալության տևողության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Վարձակալությունից բխող պարտավորությունները սկզբում չափվում են ներկա արժեքի հիման վրա: Վարձակալության պարտավորությունները ներառում են հետևյալ վարձավճարների գուտ ներկա արժեքը.

- ֆիքսված վճարներ (ներառյալ՝ հիմնական ֆիքսված վճարումները), հանած վարձակալության խթան հանդիսացող ցանկացած դեբիտորական պարտքեր;
- վարձակալության փոփոխական վճար, որը հիմնված է ինդեքսի կամ տոկոսադրույքի վրա;
- վարձակալի կողմից վճարվելիք գումարները մնացորդային արժեքի երաշխիքների ներքո;
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը ողջամտորեն համոզված է, որ այն կիիրագործի, և
- վարձակալության դադարեցման համար տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է այդ օպցիոնի իրագործումը վարձակալի կողմից:

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության մեջ ներառված տոկոսադրույքը: Եթե այդ տոկոսադրույքը հնարավոր չէ որոշել, ապա օգտագործվում է վարձատուի փոխառության տոկոսադրույքը, որը վարձակալը ստիպված կլինի վճարել նմանատիպ տնտեսական միջավայրում նմանատիպ արժեքով ակտիվի ձեռքբերման համար անհրաժեշտ միջոցները փոխառելու համար, նմանատիպ պայմաններով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է հետևյալը.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումար;
- ցանկացած վարձավճար, որը կատարվել է վարձակալությունը սկսվելու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ՝ հանած վարձակալման խթանման համար ստացված ցանկացած վճար;
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախս և
- վերականգնման ծախսեր

Որպես բացառություն վերը թվարկվածի, Բանկը հաշվառում է կարճաժամկետ վարձակալությունները՝ վարձավճարները հավասարաչափ ճանաչելով որպես գործառնական ծախս:

Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը դիտարկում է բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք առաջացնում են վարձակալության երկարաձգման օպցիոնի իրագործելու կամ վարձակալության դադարեցման օպցիոնը չիրագործելու տնտեսական խթանը: Երկարաձգման օպցիոնը (կամ դադարեցման օպցիոններից հետո սկսվող ժամանակահատվածները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, երբ առկա է խելամիտ համոզվածություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

Գնահատումը վերանայվում է այն դեպքում, երբ էական դեպք կամ հանգամանքների էական փոփոխություն է տեղի ունենում, որն ազդում է այս գնահատման վրա և գտնվում է վարձակալի վերահսկողության շրջանակում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Պարտավորություններ այլ բանկերին. Այլ բանկերին վճարվելիք գումարները գրանցվում են այն պահին, երբ ակտիվը կամ դրամական միջոցը տրամադրվում է Բանկին թղթակից բանկերից:

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ. Հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ են ֆիզիկական անձանց, պետության կամ կորպորատիվ հաճախորդների նկատմամբ և հաշվառվում են ԱԱ-ով:

Իրական արժեքով՝ շահույթ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ. Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է նախորոշել որոշակի պարտավորություններ որպես ԻԱՇՎՄ-ով չափվող: Այդպիսի պարտավորությունների օգուտը և վնասը ներկայացվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքում գումարի փոփոխության, որը պայմանավորված է այդ պարտավորությունների գծով վարկային ռիսկի փոփոխություններով (սահմանվում է որպես շուկայական պայմանների փոփոխության հետ առնչություն չունեցող գումար, որը հանգեցնում է շուկայական ռիսկի առաջացմանը), որոնք արտացոլված են այլ համապարփակ արդյունքում և հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում: Եթե նման ներկայացումը չի հանգեցնում հաշվապահական անհամապատասխանությունների առաջացմանը կամ ավելացմանն, ապա այդ դեպքում պարտավորության վարկային ռիսկի փոփոխման հետ կապված օգուտը և վնասը նույնպես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են արտարժույթի փոխարկման պայմանագրեր, ֆորվարդները, սփոթերը և չափվում են իրական արժեքով:

Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ իրական արժեքի դրական լինելու դեպքում և որպես պարտավորություններ՝ իրական արժեքի բացասական լինելու դեպքում: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են տարվա շահույթում կամ վնասում (եկամուտ՝ հանած ածանցյալ ֆինանսական գործիքներից առաջացած վնասներ):

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթի կամ վնասի համար հիմք են հանդիսանում գնահատումները, եթե ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են նախքան համապատասխան հարկային հաշվետվություններ ներկայացնելը: Հարկերը, բացառությամբ շահութահարկի, գրանցվում են վարչական և այլ գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը, սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն կամ առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցվող հարկային վնասը կօգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցվող հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. Պարտավորությունների և վճարների գծով պահուստներն անորոշ ժամանակով և գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են, երբ Բանկը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավական կամ կառուցողական պարտականություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ինչպես նաև հնարավոր է արժանահավատորեն գնահատել պարտավորության գումարը:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերին ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հարկային հետևանքներից զուտ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Տոկոսային եկամտի և ծախսի ճանաչում. Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են բոլոր պարտքային գործիքների համար, հաշվեգրման մեթոդով, շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այս մեթոդը՝ տոկոսային եկամտի կամ ծախսի կազմում հետաձգում է պայմանագրի կողմ հանդիսացող կողմերի միջև բոլոր վճարված կամ ստացված վճարները, գործարքի հետ կապված ծախսումները և բոլոր այլ հավելավճարներն ու զեղչերը, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս են կազմում:

Պարտքային գործիքների գծով տոկոսային եկամուտները, որոնք հաշվարկվում են անվանական տոկոսադրույքով, ներկայացված են «Այլ նմանատիպ եկամուտներ» տողում շահույթում կամ վնասում:

Արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս կազմող վճարները ներառում են այն սկզբնավորման վճարները, որոնք ստացվել կամ վճարվել են ֆինանսական ակտիվի սկզբնավորման կամ ձեռքբերման կամ ֆինանսական պարտավորության թողարկման հետ առնչություն ունեցող կազմակերպության կողմից (օրինակ, վարկարժանության գնահատման, երաշխիքների կամ գրավի գնահատման և գրանցման, գործիքի պայմանների բանակցման կամ գործարքային փաստաթղթերի մշակման համար վճարներ): Շուկայական տոկոսադրույքով վարկեր սկզբնավորելու համար Բանկի կողմից ստացված հանձնառության վճարները արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս են կազմում, եթե հավանական է, որ Բանկը կկնքի հատուկ վարկային համաձայնագիր և չի ակնկալում արդյունքում ստացած վարկը վաճառել սկզբնավորումից կարճ ժամանակահատված հետո: Բանկը՝ վարկ տալու հանձնառությունը չի նախորոշում որպես ԻՄՇՎՄ-ով չափվող ֆինանսական պարտավորություն:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվների արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը գեղչում է ակնկալվող դրամական միջոցների հոսքերը (ներառյալ՝ սկզբնական ԱՎԿ-ները) սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի (սովորաբար ներկայացված է գնման գնով): Արդյունքում արդյունավետ տոկոսադրույքը վարկային ճշգրտված է:

Տոկոսային եկամուտը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ (i) ֆինանսական ակտիվների, որոնք արժեզրկվել են (Փուլ 3), որոնց համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ամորտիզացված արժեքի նկատմամբ, հանած ԱՎԿ-ների դրույթը և (ii) ֆինանսական ակտիվների, որոնք գնված կամ ստեղծված արժեզրկված են, որոնց համար սկզբնապես արժեզրկումով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ամորտիզացված արժեքի հանդեպ:

Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ. Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով ծառայությունները մատուցելու ժամանակ, երբ հաճախորդը միաժամանակ ստանում և օգտագործում է Բանկի գործունեության արդյունքում առաջացած օգուտները: Այդ եկամուտը ներառում է պարբերաբար առաջացող հաշվի սպասարկման վճարները, հաշվի բաժանորդային վճարները, սպասարկման պրեմիում փաթեթի վճարները և այլն: Փոփոխական վճարները ճանաչվում են միայն այնքանով, որքանով ղեկավարությունն ակնկալում է, որ բարձր հավանական է, որ նշանակալի հակադարձում տեղի չի ունենա:

Այլ կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները ճանաչվում են ժամանակի որոշակի պահի դրությամբ, երբ Բանկը կատարում է իր կատարման պարտականությունները, որպես կանոն, հիմնական գործարքի կատարման ժամանակ: Ստացված կամ ստացման ենթակա կումիսիոն եկամուտներն իրենցից ներկայացնում են գործարքի գին այն ծառայությունների համար, որոնք սահմանված են որպես առանձին կատարման պարտականություններ: Այդ եկամուտը ներառում է հաճախորդի անունից արտարժույթի վաճառքի կամ գնման, վճարային գործարքների կատարման, կանխիկ հաշվարկների, հավաքագրման կամ կանխիկի տրամադրման վճարներ:

Ֆիդուցիար ակտիվներ և պահառուական ծառայություններ. Բանկի կողմից իր անունով, սակայն երրորդ անձանց հաշիվներում պահվող ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ստացված կամ ստացման ենթակա գումարն իրենց ներկայացնում է ծառայությունների դիմաց վարձատրություն: Այդ վճարները ճանաչվում են ժամանակի ընթացքում, գծային մեթոդով, երբ ծառայությունները մատուցվում են, քանի որ հաճախորդը միաժամանակ ստանում և սպառում է Բանկի կողմից իրականացվող օգուտները: Ֆիդուցիար գործունեությունից առաջացած վճարները ներկայացված են կումիսիոն եկամուտների կազմում:

Արտարժույթի առք ու վաճառք և արտարժույթի փոխարկում: Բանկը, դրամարկղերում և բանկային հաշիվների միջոցով վաճառում և գնում է արտարժույթ, ինչպես նաև կատարում է արտարժույթի փոխանակումներ: Գործարքներն իրականացվում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով, որոնք տարբերվում են կոնկրետ ամսաթվերին հրապարակված պաշտոնական փոխարժեքներից: Պաշտոնական փոխարժեքների և Բանկի կողմից առաջարկվող փոխարժեքների տարբերությունը ճանաչվում է փոխարժեքային տարբերություններում՝ կոնկրետ կատարման պարտականությունների բավարարման պահին:

Արտարժույթի փոխարկում և արտարժույթով հողվածների ներկայացում. Բանկի ֆունկցիոնալ արժույթն է ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով ՀՀ ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները ֆունկցիոնալ արժույթով վերահաշվարկվում են այդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտը և վնասը, որոնք առաջանում են գործարքների մարումից և տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքի՝ Բանկի ֆունկցիոնալ արժույթով դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից, ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում (որպես փոխարժեքային զուտ տարբերություններ):

Տարեվերջի փոխարժեքով վերահաշվարկը չի վերաբերում սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հողվածներին:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հողվածները, ներառյալ բաժնային ներդրումները, վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով:

Իրական արժեքով չափվող արտարժույթով չափվող ոչ դրամային հողվածների վրա փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը ճանաչվում է իրական արժեքի վերաչափումից օգուտ կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար կիրառվող փոխարժեքները՝ 2021թ.-ի դեկտեմբերի 31-ին կազմել են 1 ԱՄՆ դոլարի դիմաց 480.14 դրամ (2020թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 522.59 դրամ), 1 Եվրոյի դիմաց 542.61 դրամ (2020թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 641.11 դրամ), 1 Անգլիական ֆունտ ստերլինգի դիմաց 646.17 դրամ (2020թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 709.47 դրամ):

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Այդպիսի հաշվանցման իրավունքը (ա) չպետք է պայմանական լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Անձնակազմի ծախսեր և դրանց հետ կապված վճարներ. Աշխատավարձերը, ՀՀ պետական կենսաթոշակային և ապահովագրական հիմնադրամներին կատարվող վճարները, վճարվող տարեկան արձակուրդը, անաշխատունակության արձակուրդը, պարգևավճարները և այլ ոչ դրամային փոխհատուցումները հաշվեգրվում են այն տարվա համար, որի ընթացքում Բանկի աշխատակիցների կողմից մատուցվել են համապատասխան ծառայությունները:

Իրացվելիության տեսանկյունից ֆինանսական դրության ներկայացում. Բանկը չունի հստակ տարանջատվող գործառնությունների ցիկլ, այդ իսկ պատճառով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները առանձին ներկայացված չեն: Փոխարենն ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են իրենց իրացվելիության կարգով:

Ներկայացման փոփոխություններ. Անհրաժեշտության դեպքում համապատասխան թվերը ճշգրտվում են ընթացիկ տարվա համար գումարների ներկայացմանը համապատասխան:

4 Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
Կանխիկը դրամարկղում	5,123,602	5,623,736
ՀՀ ԿԲ-ում դրամական միջոցների մնացորդներ (բացառությամբ պարտադիր պահվող դրամական միջոցների)	35,344,427	24,087,351
ԿԲ-ում պարտադիր պահվող դրամական միջոցներ	825,000	545,000
Այլ բանկերի ընթացիկ հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ	17,884,689	8,750,186
Հանած վարկային կորուստների պահուստ	-82,606	-87,764
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	59,095,112	38,918,509

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է դրամական միջոցների և դրանց համարժեքների վարկային որակը՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային ռիսկի գնահատումների հիման վրա:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	ՀՀ ԿԲ-ում դրամական միջոցների մնացորդներ, ներառյալ պարտադիր պահուստները	Ընթացիկ հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ	Ընդամենը
- Գերազանց մակարդակ	-	16,484,063	16,484,063
- Բավարար մակարդակ	36,169,427	-	36,169,427
- Ենթաստանդարտ	-	1,400,626	1,400,626
Հանած վարկային կորուստների պահուստ	-82,501	-105	-82,606
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ բացառությամբ կանխիկը դրամարկղում	36,086,926	17,884,584	53,971,510

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է դրամական միջոցների և դրանց համարժեքների վարկային որակը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային ռիսկի գնահատումների հիման վրա:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	ՀՀ ԿԲ-ում դրամական միջոցների մնացորդներ, ներառյալ պարտադիր պահուստները	Ընթացիկ հաշիվներ և օվերնայթ տեղաբաշխումներ	Ընդամենը
- Գերազանց մակարդակ	-	7,249,736	7,249,736
- Բավարար մակարդակ	24,632,351	-	24,632,351
- Ենթաստանդարտ	-	1,500,450	1,500,450
Հանած վարկային կորուստների պահուստ	-87,637	-127	-87,764
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ բացառությամբ կանխիկը դրամարկղում	24,544,714	8,750,059	33,294,773

ԱՎԿ-ի չափման նպատակով դրամական միջոցների մնացորդները և դրանց համարժեքները ներառված են Փուլ 1-ում:

ՀՀ ԿԲ-ում դրամական միջոցների պարտադիր մնացորդները ներառում են Արմենիան Քարդ վճարային համակարգի միջոցով իրականացված գործառնությունների վերջնահաշվարկի կատարման պայմանագրի համաձայն հաշվարկված պարտադիր նվազագույն գումարը՝ հաշվարկային լիմիտը: Նման միջոցների դուրս բերումը սահմանափակված է և Բանկը չի կարող իրականացնել այդ լիմիտը գերազանցող քարտային գործարքներ:

5 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
Տեղաբաշխումներ այլ բանկերում, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրվանից երեք ամսից պակաս է	2,638,161	9,666,538
Հակադարձ ռեպո պայմանագրեր այլ բանկերում, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրվանից երեք ամսից պակաս է	0	0
Հանած վարկային կորուստների պահուստ	0	-384
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	2,638,161	9,666,154

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է բանկերին տրված վարկերի և փոխատվությունների վարկային որակի վերլուծություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, վարկային ռիսկի գնահատման հիման վրա և բացահայտում է բանկերին տրված վարկերը և փոխատվությունները երեք փուլով՝ ԱՎԿ չափման նպատակներով:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Ընդամենը
Տեղաբաշխումներ այլ բանկերում		
- Գերազանց մակարդակ	2,638,161	2,638,161
- Բավարար մակարդակ	0	0
- Ենթաստանդարտ	0	0
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ (համախառն հաշվեկշռային արժեք)	2,638,161	2,638,161
Հանած վարկային կորուստների պահուստ	0	0
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ (հաշվեկշռային արժեք)	2,638,161	2,638,161

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է բանկերին տրված վարկերի և փոխատվությունների վարկային որակի վերլուծություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, վարկային ռիսկի գնահատման հիման վրա և բացահայտում է բանկերին տրված վարկերը և փոխատվությունները երեք փուլով՝ ԱՎԿ չափման նպատակներով:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Ընդամենը
Տեղաբաշխումներ այլ բանկերում		
- Գերազանց մակարդակ	48,333	48,333
- Բավարար մակարդակ	9,618,205	9,618,205
- Ենթաստանդարտ	0	0
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	9,666,538	9,666,538
Հանած վարկային կորուստների պահուստ	-384	-384
Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ (հաշվեկշռային արժեք)	9,666,154	9,666,154

6 Ներդրումներ պարտքային արժեթղթերում

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
Պարտքային արժեթղթեր պարտադիր ԻԱՇՎՄ-ով չափվող	290,739	309,215
Պարտքային արժեթղթեր ԻԱԱՀԱՄ-ով	33,596,891	25,830,934
Պարտքային արժեթղթեր ԱԱ-ով	1,215,892	5,277,664
Ընդամենը ներդրումներ պարտքային արժեթղթերում	35,103,522	31,417,813

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային արժեթղթերում ներդրումները՝ ըստ չափման կարգերի և դասերի:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Պարտքային արժեթղթեր պարտադիր ԻԱՇՎՄ-ով չափվող	Պարտքային արժեթղթեր ԻԱԱՀԱՄ-ով	Պարտքային արժեթղթեր ԱԱ-ով	Ընդամենը
Հայաստանի պետական պարտատոմսեր	290,739	33,596,891	1,216,375	35,104,005
Ընդամենը պարտքային արժեթղթերում ներդրումներն առ 31 դեկտեմբերի 2021թ. (իրական արժեք կամ համախառն հաշվեկշռային արժեք)	290,739	33,596,891	1,216,375	35,104,005
Վարկային կորստի պահուստ	-	-	-483	-483
Ընդամենը ներդրումներ պարտքային արժեթղթերում (հաշվեկշռային արժեք)	290,739	33,596,891	1,215,892	35,103,522

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային արժեթղթերում ներդրումները՝ ըստ չափման կարգերի և դասերի:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Պարտքային արժեթղթեր պարտադիր ԻԱՇՎՄ-ով չափվող	Պարտքային արժեթղթեր ԻԱԱՀԱՄ-ով	Պարտքային արժեթղթեր ԱԱ-ով	Ընդամենը
Հայաստանի պետական պարտատոմսեր	309,215	25,830,934	5,279,586	31,419,735
Ընդամենը պարտքային արժեթղթերում ներդրումներն առ 31 դեկտեմբերի 2019թ. (իրական արժեք կամ համախառն հաշվեկշռային արժեք)	309,215	25,830,934	5,279,586	31,419,735
Վարկային կորստի պահուստ	-	-	-1,922	-1,922
Ընդամենը ներդրումներ պարտքային արժեթղթերում (հաշվեկշռային արժեք)	309,215	25,830,934	5,277,664	31,417,813

ա) Պարտքային արժեթղթեր ԻԱՇՎՄ-ով չափվող

Պարտքային արժեթղթերը, որոնք Բանկի կողմից պարտադիր դասակարգվել են որպես ԻԱՇՎՄ-ով չափվող, իրենցից ներկայացնում են առևտրային արժեթղթեր՝ "վաճառքի համար պահվող" բիզնես մոդելով:

ԻԱՇՎՄ-ով պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, որը նաև արտացոլում է վարկային ռիսկի հետ կապված ցանկացած դուրսգրում, և լավագույնս արտացոլում է Բանկի վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը:

ԻԱՇՎՄ-ով պարտքային արժեթղթերը գրավով ապահովված չեն:

(բ) ԻԱԱՀՎՄ-ով պարտքային արժեթղթեր

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԻԱԱՀՎՄ-ով չափվող պարտքային արժեթղթերի գծով վարկային ռիսկի վերլուծությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնց համար ԱՎԿ-ների գնահատված պահուստը ճանաչվում է վարկային ռիսկի մակարդակների հիման վրա:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Ընդամենը
Հայաստանի պետական պարտատուներ		
- Գերազանց մակարդակ	33,668,062	33,668,062
Ընդամենը համախառն հաշվեկշռային արժեք ԱԱ-ով	33,668,062	33,668,062
Գումարած իրական արժեքի ճշգրտումն ԱԱ-ից դեպի իրական արժեք	-71,171	-71,171
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	33,596,891	33,596,891
Ընդամենը ԻԱԱՀՎՄ-ով պարտքային արժեթղթերում ներդրումներ (իրական արժեք)	33,596,891	33,596,891

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԻԱԱՀՎՄ-ով չափվող պարտքային արժեթղթերի գծով վարկային ռիսկի վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնց համար ԱՎԿ-ների գնահատված պահուստը ճանաչվում է վարկային ռիսկի մակարդակների հիման վրա:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Ընդամենը
Հայաստանի պետական պարտատուներ		
- Գերազանց մակարդակ	25,889,600	25,889,600
Ընդամենը համախառն հաշվեկշռային արժեք ԱԱ-ով	25,889,600	25,889,600
Գումարած իրական արժեքի ճշգրտումն ԱԱ-ից դեպի իրական արժեք	-58,666	-58,666
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	25,830,934	25,830,934
Ընդամենը ԻԱԱՀՎՄ-ով պարտքային արժեթղթերում ներդրումներ (իրական արժեք)	25,830,934	25,830,934

ԻԱԱՀՎՄ-ով պարտքային արժեթղթերը գրավով ապահովված չեն:

(գ) ԱԱ-ով պարտքային արժեթղթերում ներդրումներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԱԱ-ով չափվող պարտքային արժեթղթերի վարկային որակի վերլուծությունը՝ 2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ վարկային ռիսկի մակարդակների հիման վրա, ինչպես նաև դրանց բացահայտումը երեք փուլով՝ ԱՎԿ-ի գնահատման նպատակով:

<i>հազ. << դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Ընդամենը
Հայաստանի պետական պարտատոմսեր		
- Գերազանց մակարդակ	1,216,375	1,216,375
ԱԱ-ով ընդամենը պարտքային արժեթղթերում ներդրումներ (համախառն հաշվեկշռային արժեք)	1,216,375	1,216,375
Վարկային կորստի պահուստ	-483	-483
Ընդամենը ներդրումներ պարտքային արժեթղթերում ԱԱ-ով (հաշվեկշռային արժեք)	1,215,892	1,215,892

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԱԱ-ով չափվող պարտքային արժեթղթերի վարկային որակի վերլուծությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ վարկային ռիսկի մակարդակների հիման վրա, ինչպես նաև դրանց բացահայտումը երեք փուլով՝ ԱՎԿ-ի գնահատման նպատակով:

<i>հազ. << դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Ընդամենը
Հայաստանի պետական պարտատոմսեր		
- Գերազանց մակարդակ	5,279,586	5,279,586
ԱԱ-ով ընդամենը պարտքային արժեթղթերում ներդրումներ (համախառն հաշվեկշռային արժեք)	5,279,586	5,279,586
Վարկային կորստի պահուստ	-1,922	-1,922
Ընդամենը ներդրումներ պարտքային արժեթղթերում ԱԱ-ով (հաշվեկշռային արժեք)	5,277,664	5,277,664

ԱԱ-ով պարտքային արժեթղթերը գրավով ապահովված չեն:

7 Ներդրումներ բաժնային արժեթղթերում

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
ԻԱԱՀԱՄ-ով բաժնային արժեթղթեր	32,077	32,221
Ընդամենը ներդրումներ բաժնային արժեթղթերում	32,077	32,221

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնային արժեթղթերում կատարված ներդրումներն՝ ըստ չափման կարգերի և դասերի:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Բաժնային արժեթղթեր ԻԱԱՀԱՄ-ով	Ընդամենը
<i>Կորպորատիվ արժեթղթեր</i>		
ԱՔՌԱ վարկային բյուրո	19,140	19,140
Արմենիան Քարդ	12,143	12,143
SWIFT	794	794
Ընդամենը ներդրումներ բաժնային արժեթղթերում	32,077	32,077

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնային արժեթղթերում կատարված ներդրումներն՝ ըստ չափման կարգերի և դասերի:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Բաժնային արժեթղթեր ԻԱԱՀԱՄ-ով	Ընդամենը
<i>Կորպորատիվ արժեթղթեր</i>		
ԱՔՌԱ վարկային բյուրո	19,140	19,140
Արմենիան Քարդ	12,143	12,143
SWIFT	938	938
Ընդամենը ներդրումներ բաժնային արժեթղթերում	32,221	32,221

8 Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
ԱԱ-ով չափվող հաճախորդների տրված վարկերի և փոխառությունների համախառն հաշվեկշռային արժեք	161,689,468	150,664,219
Հանած վարկային կորստի պահուստ	-8,055,334	-6,918,282
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	153,634,134	143,745,937

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ԱԱ-ով չափվող հաճախորդներին տրված վարկերն ու փոխառություններն ըստ դասերի՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ը և 2020թ. դեկտեմբերի 31-ը:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.			31.12.2020թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Վարկային կորստի պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Վարկային կորստի պահուստ	Հաշվեկշռային արժեք
<i>Երավարանական անձանց տրված վարկեր</i>						
Վարկեր խոշոր ընկերություններին	87,151,747	(2,351,369)	84,800,378	89,081,669	(2,747,010)	86,334,659
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	28,423,993	(5,439,926)	22,984,068	29,657,467	(3,954,941)	25,702,526
<i>Անհատներին տրված վարկեր</i>						
Հիփոթեքային վարկեր	32,797,485	(130,271)	32,667,214	21,460,017	(115,288)	21,344,729
Վարկային քարտեր	1,604,758	(15,426)	1,589,332	1,523,743	(25,055)	1,498,688
Գառուցման վարկեր	3,474,746	(47,293)	3,427,453	1,704,077	(28,859)	1,675,218
Ավտոմեքենայի վարկեր	127,718	(713)	127,004	120,557	(363)	120,194
Սպառողական վարկեր	4,990,650	(46,945)	4,943,705	4,324,439	(29,071)	4,295,368
Անհատներին տրված այլ վարկեր	3,118,371	(23,390)	3,094,981	2,792,250	(17,695)	2,774,555
ԱԱ-ով չափվող ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	161,689,468	-8,055,334	153,634,134	150,664,219	-6,918,282	143,745,937

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ԱԱ-ով չափվող հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով վարկային կորստի պահուստի և համախառն հաշվեկշռային արժեքի փոփոխությունները 2021թ. ընթացքում:

	Վարկային կորստի պահուստ			Ընդամենը	Համախառն հաշվեկշռային արժեք			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3		Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
հազ. << դրամ	(12-ամսյա ԱՎԿ)	(ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	(ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)		(12-ամսյա ԱՎԿ)	(ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	(ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)	
Բյուջային հաճախորդներին տրված վարկեր								
Առ 1 հունվարի 2021թ.	(553,726)	(905,275)	(5,242,950)	(6,701,951)	79,488,653	21,264,296	17,490,092	118,243,041
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ.</i>								
Անցում								
- ամբողջ ժամկետի ընթացքում (1-ին փուլից 2-րդ փուլ)	96,106	(96,106)	-	-	(11,082,482)	11,082,482	-	-
- արժեզրկված (1-ին և 2-րդ փուլից 3-րդ փուլ)	-	92,110	(92,110)	-	-	(3,779,984)	3,779,984	-
- 12-ամսյա ԱՎԿ (2-րդ և 3-րդ փուլից 1-ին փուլ)	(61,824)	61,824	-	-	4,541,788	(4,541,788)	-	-
Նոր ստեղծված կամ զեղված	(230,878)	-	-	(230,878)	29,008,648	-	-	29,008,648
Ժամանակահատվածում ապաճանաչված	3,411	71	13,196	16,678	(5,319,429)	(35,838)	(329,003)	(5,684,270)
Փոփոխություններ ԱՎԿ չափման մոդելի դատողությունների մեջ	108,957	462,231	(2,810,789)	(2,239,601)	-	-	-	-
ԱՎԿ-ի գույն վերաչափում առաջացած փուլի փոխանցումից	3,585	(74,016)	-	(70,431)	(11,775,779)	(8,019,376)	(2,019,650)	(21,814,805)
Այլ շարժեր	(7,480)	(31,989)	35,769	(3,700)	-	-	-	-
Ընդամենը վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ	(88,123)	414,125	(2,853,934)	(2,527,932)	5,372,746	(5,294,504)	1,431,331	1,509,573
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ</i>								
Դուրսգումարներ	-	-	-	-	-	-	-	-
Արտարժույթի փոխարկում և այլ շարժեր	35,497	58,830	497,897	592,224	(2,356,838)	(1,493,339)	(749,041)	(4,599,218)
Չեղյի հակադարձում (3-րդ փուլի համար)	-	-	846,364	846,364	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	(606,352)	(432,320)	(6,752,623)	(7,791,295)	82,504,561	14,476,453	18,172,382	115,153,396
Անասուններին տրված վարկեր								
Առ 1 հունվարի 2021թ.	(43,634)	(24,148)	(148,549)	(216,331)	30,660,496	365,820	659,740	31,686,056
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ</i>								
Անցում								
- ամբողջ ժամկետի ընթացքում (1-ին փուլից 2-րդ փուլ)	1,024	(1,024)	-	-	(509,667)	509,667	-	-
- արժեզրկված (1-ին և 2-րդ փուլից 3-րդ փուլ)	9	16,740	(16,749)	-	(2,357)	(343,995)	346,350	(2)
- 12-ամսյա ԱՎԿ (2-րդ և 3-րդ փուլից 1-ին փուլ)	(60,929)	27,038	33,891	-	570,923	(456,871)	(114,051)	1
Նոր ստեղծված կամ զեղված	(28,644)	-	-	(28,644)	20,350,811	-	-	20,350,811
Ժամանակահատվածում ապաճանաչված	3,509	1,884	33,076	38,469	(1,805,668)	(22,527)	(93,827)	(1,922,022)
Փոփոխություններ ԱՎԿ չափման մոդելի դատողությունների մեջ	(47,921)	25,835	(98,784)	(120,870)	-	-	-	-
ԱՎԿ-ի գույն վերաչափում առաջացած փուլի փոխանցումից	50,584	(23,349)	(149)	27,086	(4,171,995)	20,772	50,545	(4,100,678)
Այլ շարժեր	46,323	(32,756)	(37,493)	(23,926)	-	-	-	-
Ընդամենը վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ	(36,045)	14,368	(86,208)	(107,885)	14,432,047	(292,954)	189,017	14,328,110
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ</i>								
Դուրսգումարներ	-	-	59,954	59,954	-	-	(59,954)	(59,954)
Արտարժույթի փոխարկում և այլ շարժեր	226	(3)	-	223	(149,466)	841	-	(148,625)
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	(79,453)	(9,783)	(174,803)	(264,039)	44,943,077	73,707	788,803	45,805,587

Համախառն հաշվեկշռային արժեքի շարժը չի ներառում հաճախորդներին տրված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսագումարների շարժը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ԱԱ-ով չափվող հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով վարկային կորստի պահուստի և համախառն հաշվեկշռային արժեքի փոփոխությունները 2020թ. ընթացքում:

հազ. << դրամ	Վարկային կորստի պահուստ			Ընդամենը	Համախառն հաշվեկշռային արժեք			Ընդամենը
	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Փուլ 2 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	Փուլ 3 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)		Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Փուլ 2 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	Փուլ 3 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)	
Իրավաբանական հաճախորդներին տրված վարկեր								
Առ 1 հունվարի 2020թ.	(1,087,379)	(6,781)	(3,779,082)	(4,873,242)	76,326,304	299,606	16,805,551	93,431,461
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ.</i>								
Անցում								
- ամբողջ ժամկետի ընթացքում (1-ին փուլից 2-րդ փուլ)	270,502	(270,502)	-	-	(24,514,923)	24,514,923	-	-
- արժեզրկված (1-ին և 2-րդ փուլից 3-րդ փուլ)	-	-	-	-	-	-	-	-
- 12-ամսյա ԱՎԿ (2-րդ և 3-րդ փուլից 1-ին փուլ)	(5,724)	5,724	-	-	1,580,407	(1,580,407)	-	-
Նոր ստեղծված կամ զնված	(150,980)	-	-	(150,980)	18,110,322	-	-	18,110,322
Ժամանակահատվածում ապաճանաչված	5,930	902	7,350	14,182	(6,011,682)	(183,859)	(567,999)	(6,763,540)
Փոփոխություններ ԱՎԿ չափման մոդելի դատողությունների մեջ	729,145	(715,052)	(1,699,471)	(1,685,378)	9,639,407	-	-	-
ԱՎԿ-ի գուտ վերաչափում առաջացած փուլի փոխանցումից	1,099	(139,514)	-	(138,415)	-	(2,631,018)	109,046	7,117,435
Այլ շարժեր	(264,830)	268,178	-	3,348	-	-	-	-
Ընդամենը վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ	585,142	(850,264)	(1,692,121)	(1,957,243)	(1,196,469)	20,119,639	(458,953)	18,464,217
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն չունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ</i>								
Դուրսգումներ	-	-	-	-	-	-	-	-
Արտարժույթի փոխարկում և այլ շարժեր	(51,489)	(48,230)	(357,145)	(456,864)	4,358,818	845,051	1,143,494	6,347,363
Ջեռյի հակադարձում (3-րդ փուլի համար)	-	-	585,398	585,398	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	(553,726)	(905,275)	(5,242,950)	(6,701,951)	79,488,653	21,264,296	17,490,092	118,243,041
Անհատներին տրված վարկեր								
Առ 1 հունվարի 2020թ.	(56,043)	(7,830)	(168,492)	(232,365)	29,078,536	106,329	717,280	29,902,145
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փո</i>								
Անցում								
- ամբողջ ժամկետի ընթացքում (1-ին փուլից 2-րդ փուլ)	2,010	(2,010)	-	-	(932,686)	932,686	-	-
- արժեզրկված (1-ին և 2-րդ փուլից 3-րդ փուլ)	-	14,908	(14,908)	-	(41)	(277,128)	277,169	-
- 12-ամսյա ԱՎԿ (2-րդ և 3-րդ փուլից 1-ին փուլ)	(89,587)	11,262	78,325	-	698,608	(364,803)	(333,803)	2
Նոր ստեղծված կամ զնված	(15,468)	-	-	(15,468)	10,995,125	-	-	10,995,125
Ժամանակահատվածում ապաճանաչված	8,977	2,585	3,305	14,867	(3,164,498)	(17,592)	(11,726)	(3,193,816)
Փոփոխություններ ԱՎԿ չափման մոդելի դատողությունների մեջ	(64,149)	20,439	(50,802)	(94,512)	-	-	-	-
ԱՎԿ-ի գուտ վերաչափում առաջացած փուլի փոխանցումից	83,662	(39,333)	(4)	44,325	(6,342,778)	(13,875)	74,483	(6,282,170)
Այլ շարժեր	87,492	(24,133)	-	63,359	-	-	-	-
Ընդամենը վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն ունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ	12,937	(16,282)	15,916	12,571	1,253,730	259,288	6,123	1,519,141
<i>Վարկային կորստի գծով ծախսերի վրա ազդեցություն չունեցող ժամանակաշրջանի փոփոխություններ</i>								
Դուրսգումներ	-	-	65,492	65,492	-	-	(65,492)	(65,492)
Արտարժույթի փոխարկում և այլ շարժեր	(528)	(36)	(61,465)	(62,029)	328,230	203	1,829	330,262
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	(43,634)	(24,148)	(148,549)	(216,331)	30,660,496	365,820	659,740	31,686,056

Համախառն հաշվեկշռային արժեքի շարժը չի ներառում հաճախորդներին տրված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսագումարների շարժը:

Ստորև ներկայացված է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով գնահատված կորպորատիվ հանախորդներին տրված վարկերի վարկային որակի վերլուծությունը

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Փուլ 2 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	Փուլ 3 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)	Ընդամենը
Վարկեր խաշոր ընկերություններին				
- Գերազանց մակարդակ	1,942,683	-	-	1,942,683
- Լավ մակարդակ	-	-	-	-
- Բավարար մակարդակ	66,497,825	6,916,297	-	73,414,123
- Ենթաստանդարտ	525,683	5,445,964	-	5,971,647
- Արժեզրկված	-	-	5,823,294	5,823,294
Համախառն հաշվեկշռային արժեք	68,966,191	12,362,262	5,823,294	87,151,747
Վարկային կորստի պահուստ	(500,162)	(329,770)	(1,521,437)	(2,351,369)
Հաշվեկշռային արժեք	68,466,029	12,032,492	4,301,857	84,800,378
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին				
- Գերազանց մակարդակ	951	-	-	951
- Լավ մակարդակ	14	-	-	14
- Բավարար մակարդակ	13,281,247	419,327	-	13,700,575
- Ենթաստանդարտ	479,039	1,714,476	-	2,193,515
- Արժեզրկված	-	-	12,528,939	12,528,939
Համախառն հաշվեկշռային արժեք	13,761,251	2,133,803	12,528,939	28,423,993
Վարկային կորստի պահուստ	(106,194)	(102,549)	(5,231,183)	(5,439,926)
Հաշվեկշռային արժեք	13,655,057	2,031,254	7,297,756	22,984,068

Ստորև ներկայացված է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով գնահատված ֆիզիկական անձանց տրված վարկերի վարկային որակի վերլուծությունը

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Փուլ 2 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	Փուլ 3 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)	Ընդամենը
Հիփոթեքային վարկեր				
- Գերազանց մակարդակ	32,287,617	-	-	32,287,617
- Բավարար մակարդակ	-	17,438	-	17,438
- Արժեզրկված	-	-	492,430	492,430
Համախառն հաշվեկշռային արժեք	32,287,617	17,438	492,430	32,797,485
Վարկային կորստի պահուստ	(29,437)	(1,211)	(99,623)	(130,271)
Հաշվեկշռային արժեք	32,258,180	16,226	392,808	32,667,214
Վարկային քարտեր				
- Գերազանց մակարդակ	252	-	-	252
- Լավ մակարդակ	1,587,548	7,169	-	1,594,717
- Բավարար մակարդակ	-	-	-	-
- Ենթաստանդարտ	-	8,001	-	8,001
- Արժեզրկված	-	-	1,788	1,788
Համախառն հաշվեկշռային արժեք	1,587,801	15,169	1,788	1,604,758
Վարկային կորստի պահուստ	(10,798)	(2,876)	(1,752)	(15,426)
Հաշվեկշռային արժեք	1,577,002	12,293	36	1,589,332

Գառուցման վարկեր				
- Գերազանց մակարդակ	3,263,393	-	-	3,263,393
- Բավարար մակարդակ	-	-	-	-
- Արժեզրկված	-	-	211,353	211,353
Համախառն հաշվեկշռային արժեք	3,263,393	0	211,353	3,474,746

Վարկային կորստի պահուստ	(3,054)	-	(44,239)	(47,293)
Հաշվեկշռային արժեք	3,260,339	0	167,114	3,427,453

Ավտոմեքենայի վարկեր				
- Գերազանց մակարդակ	127,718	-	-	127,718
- Լավ մակարդակ	-	-	-	-
Համախառն հաշվեկշռային արժեք	127,718	0	0	127,718

Վարկային կորստի պահուստ	(713)	-	-	(713)
Հաշվեկշռային արժեք	127,004	0	0	127,004

Սպառողական վարկեր				
- Գերազանց մակարդակ	4,445,565	-	-	4,445,565
- Լավ մակարդակ	503,674	3,870	-	507,543
- Բավարար մակարդակ	-	28,773	-	28,773
- Ենթաստանդարտ	-	576	-	576
- Արժեզրկված	-	-	8,193	8,193
Համախառն հաշվեկշռային արժեք	4,949,238	33,218	8,193	4,990,650

Վարկային կորստի պահուստ	(32,996)	(5,068)	(8,881)	(46,945)
Հաշվեկշռային արժեք	4,916,242	28,151	-688	4,943,705

Անհատներին տրված այլ վարկեր				
- Գերազանց մակարդակ	3,003,226	-	-	3,003,226
- Բավարար մակարդակ	-	9,054	-	9,054
- Արժեզրկված	-	-	106,091	106,091
Համախառն հաշվեկշռային արժեք	3,003,226	9,054	106,091	3,118,371

Վարկային կորստի պահուստ	(2,453)	(627)	(20,310)	(23,390)
Հաշվեկշռային արժեք	3,000,774	8,427	85,781	3,094,981

Մտորն ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով գնահատված կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերի վարկային որակի վերլուծությունը

<i>հազ. << դրամ</i>	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Փուլ 2 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ռիսկերի նշանակալի աճի համար)	Փուլ 3 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)	Ընդամենը
Վարկեր խոշոր ընկերություններին				
- Գերազանց մակարդակ	2,387,075	-	-	2,387,075
- Բավարար մակարդակ	64,709,786	5,631,177	-	70,340,963
- Ենթաստանդարտ	925,044	8,555,134	-	9,480,178
- Արժեզրկված	-	-	6,873,453	6,873,453
Համախառն հաշվեկշռային արժեք	68,021,904	14,186,311	6,873,453	89,081,669
Վարկային կորստի պահուստ	(487,066)	(618,997)	(1,640,946)	(2,747,010)
Հաշվեկշռային արժեք	67,534,838	13,567,314	5,232,507	86,334,659

Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին

- Գերազանց մակարդակ	1,104	-	-	1,104
- Լավ մակարդակ	43	-	-	43
- Բավարար մակարդակ	11,209,791	626,887	-	11,836,678
- Ենթաստանդարտ	1,940	6,989,997	-	6,991,937
- Արժեզրկված			10,827,705	10,827,705

Համախառն հաշվեկշռային արժեք 11,212,878 7,616,884 10,827,705 29,657,467

Վարկային կորստի պահուստ (66,663) (286,278) (3,602,000) (3,954,941)

Հաշվեկշռային արժեք 11,146,215 7,330,606 7,225,706 25,702,526

Ստորև ներկայացված է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով գնահատված ֆիզիկական անձանց տրված վարկերի վարկային որակի վերլուծությունը

հազ. << դրամ	Փուլ 1 (12-ամսյա ԱՎԿ)	Փուլ 2 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ վարկային ոիսկերի նշանակալի աճի համար)	Փուլ 3 (ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ արժեզրկված)	Ընդամենը
--------------	--------------------------	--	---	----------

Հիփոթեքային վարկեր

- Գերազանց մակարդակ	20,797,736	-	-	20,797,736
- Բավարար մակարդակ	-	202,562	-	202,562
- Արժեզրկված	-	-	459,719	459,719

Համախառն հաշվեկշռային արժեք 20,797,736 202,562 459,719 21,460,017

Վարկային կորստի պահուստ (15,036) (7,330) (92,922) (115,288)

Հաշվեկշռային արժեք 20,782,700 195,232 366,797 21,344,729

Վարկային քարտեր

- Գերազանց մակարդակ	9,268	-	-	9,268
- Լավ մակարդակ	1,466,450	28,247	-	1,494,697
- Բավարար մակարդակ	-	4	-	4
- Ենթաստանդարտ	-	19,470	-	19,470
- Արժեզրկված	-	-	304	304

Համախառն հաշվեկշռային արժեք 1,475,718 47,721 304 1,523,743

Վարկային կորստի պահուստ (7,562) (17,353) (140) (25,055)

Հաշվեկշռային արժեք 1,468,156 30,368 164 1,498,688

Գառուցման վարկեր

- Գերազանց մակարդակ	1,547,921	-	-	1,547,921
- Արժեզրկված	-	-	156,156	156,156

Համախառն հաշվեկշռային արժեք 1,547,921 0 156,156 1,704,077

Վարկային կորստի պահուստ (1,139) - (27,719) (28,859)

Հաշվեկշռային արժեք 1,546,781 0 128,437 1,675,218

Ավտոմեքենայի վարկեր

- Գերազանց մակարդակ	120,557	-	-	120,557
- Լավ մակարդակ	-	-	-	-

Համախառն հաշվեկշռային արժեք 120,557 0 0 120,557

Վարկային կորստի պահուստ (363) - - (363)

Հաշվեկշռային արժեք 120,194 0 0 120,194

Մպառադական վարկեր

- Գերազանց մակարդակ	3,795,002	-	-	3,795,002
- Լավ մակարդակ	469,165	4,869	-	474,034
- Բավարար մակարդակ	-	49,600	-	49,600
- Ենթաստանդարտ	-	1,249	-	1,249
- Արժեզրկված	-	-	4,555	4,555

Համախառն հաշվեկշռային արժեք **4,264,167** **55,717** **4,555** **4,324,439**

Վարկային կորստի պահուստ (17,534) (7,224) (4,314) (29,071)

Հաշվեկշռային արժեք **4,246,634** **48,494** **241** **4,295,368**

Անհատներին տրված այլ վարկեր

- Գերազանց մակարդակ	2,657,794	-	-	2,657,794
- Բավարար մակարդակ	-	64,701	-	64,701
- Արժեզրկված	-	-	69,755	69,755

Համախառն հաշվեկշռային արժեք **2,657,794** **64,701** **69,755** **2,792,250**

Վարկային կորստի պահուստ (2,003) (2,198) (13,494) (17,695)

Հաշվեկշռային արժեք **2,655,790** **62,503** **56,261** **2,774,555**

Հաճախորդների վարկային պորտֆելում տնտեսական հատվածի ռիսկերի կենտրոնացումը հետևյալն է.

հազ. ՀՀ դրամ	31.12.2021թ.		31.12.2020թ.	
	Գումար	%	Գումար	%
Առևտուր	42,910,452	27	45,987,113	31
Մենդի և խմիչքի արտադրություն	19,328,730	12	22,115,617	15
Սպասարկման ոլորտ	17,510,233	11	15,724,174	10
Արդյունաբերություն	10,999,770	7	14,523,161	10
Էներգետիկայի ոլորտ	8,309,647	5	8,631,050	6
Շինարարություն	5,911,197	4	3,471,130	2
Ֆինանսական ոլորտ	2,838,300	2	3,366,294	2
Գյուղատնտեսություն	4,035,427	2	1,682,246	1
Այլ	3,731,985	2	3,238,350	2
Անհատներին տրված վարկեր	46,113,728	29	31,925,084	21
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխառվածություններ	161,689,468	100	150,664,219	100

9 Այլ ակտիվներ

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
<i>Այլ ֆինանսական ակտիվներ ԱԱ-ով</i>		
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	5,457,849	7,438,115
Հաշվեգրված կոմիսիոն գումարներ	283,314	437,648
Էյչ-Էս-Բի-Սի Խմբից ստացվելիք գումարներ	6,599	444,656
Այլ	707,652	462,416
Հանած վարկային կորստի պահուստ	(25,038)	(62,763)

Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ ԱԱ-ով 6,430,376 8,720,072

<i>Այլ ֆինանսական ակտիվներ ԲԱՇՎՄ-ով</i>		
Արտարժույթի ֆորվարդ գործարքների պայմանագրեր	16,991	961,108

Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ ԲԱՇՎՄ-ով 16,991 961,108

<i>Այլ ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Կանխավճարներ	94,271	84,655
Միասնական հարկային հաշիվ	3,810	1,322
Նյութեր և պաշարներ	30,105	33,665
Բռնագանձված գրավ	830,094	1,184,851

Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ 958,280 1,304,493

Ընդամենը այլ ակտիվներ 7,405,647 10,985,673

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԱԱ-ով այլ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկի ենթարկվածության վերլուծությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսվա ԱՎԿ)	Ընդամենը
<i>Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ</i>		
- Բավարար մակարդակ	5,457,849	5,457,849
- Ենթաստանդարտ	-	-
Համախառն հաշվեկշռային արժեք	5,457,849	5,457,849
Վարկային կորստի պահուստ	(25,038)	(25,038)
Հաշվեկշռային արժեք	5,432,811	5,432,811

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԱԱ-ով այլ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկի ենթարկվածության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1 (12-ամսվա ԱՎԿ)	Ընդամենը
<i>Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ</i>		
- Բավարար մակարդակ	7,438,115	7,438,115
Համախառն հաշվեկշռային արժեք	7,438,115	7,438,115
Վարկային կորստի պահուստ	(62,763)	(62,763)
Հաշվեկշռային արժեք	7,375,352	7,375,352

10 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. ՀՀ դրամ	Հող և շենքեր	Վարձակալված գույքի բարելավումներ	Սարքավորումներ և հարմարանքներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք առ 1 հունվարի 2020թ.	1,600,741	2,827,993	3,462,362	4,755,744	12,646,840
Կուտակված մաշվածություն	(405,648)	(2,704,861)	(2,645,684)	(2,826,216)	(8,582,409)
Հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2020թ.	1,195,093	123,132	816,678	1,929,528	4,064,431
Ավելացումներ	-	500	102,878	404,453	507,831
Օտարումներ/ դուրսգրումներ	-	-	(93,008)	-	(93,008)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	(113,165)	(61,024)	(244,540)	(444,478)	(863,207)
Մաշվածության օտարումներ/ դուրսգրումներ	-	-	93,000	-	93,000
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2020թ.	1,081,928	62,608	675,008	1,889,503	3,709,047
Սկզբնական արժեք առ 31 դեկտեմբերի 2020թ.	1,600,741	2,828,493	3,472,232	5,160,197	13,061,663
Կուտակված մաշվածություն	(518,813)	(2,765,885)	(2,797,224)	(3,270,694)	(9,352,616)
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2020թ.	1,081,928	62,608	675,008	1,889,503	3,709,047
Ավելացումներ	-	-	43,769	757,576	801,345
Օտարումներ/ դուրսգրումներ	-	(101,046)	(241,224)	-	(342,269)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	(113,164)	(60,590)	(226,746)	(704,636)	(1,105,136)
Մաշվածության օտարումներ/ դուրսգրումներ	-	100,578	241,112	-	341,690
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2021թ.	968,764	1,550	491,919	1,942,443	3,404,677
Սկզբնական արժեք առ 31 դեկտեմբերի 2021թ.	1,600,741	2,727,447	3,274,777	5,917,773	13,520,739
Կուտակված մաշվածություն	(631,977)	(2,725,897)	(2,782,858)	(3,975,330)	(10,116,062)
Հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի 2021թ.	968,764	1,550	491,919	1,942,443	3,404,677

11 Պարտավորություններ այլ բանկերին

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
Այլ բանկերի ընթացիկ հաշիվներ, օվերնայթ տեղաբաշխումներ և վարկեր	114,892	187,280
Ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	5,968,710	12,822,200
Կառավարության աջակցման ծրագրեր	232,350	581,688
Ռեպո պայմանագրեր	0	0
Ընդամենը բանկերի ավանդներ և մնացորդներ	6,315,952	13,591,168

12 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
Ընթացիկ հաշիվներ		
- Անհատներ	60,065,943	56,088,605
- Իրավաբանական անձիք	55,640,597	39,659,215
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	60,080,392	62,086,139
- Իրավաբանական անձիք	22,088,153	12,942,435
- Այլ	541,731	87,427
Ընդամենը հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	198,416,816	170,863,821

13 Այլ պարտավորություններ

<i>հազ. ՀՀ դրամ</i>	31.12.2021թ.	31.12.2020թ.
<i>Այլ ֆինանսական պարտավորություններ ԱԱ-ով</i>		
Ակրեդիտիվների գծով վճարվելիք գումարներ	5,457,849	7,438,115
Էյջ-Էս-Բի-Սի Խմբին վճարվելիք գումարներ	1,597,197	1,080,803
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ	49,254	516,484
Հաշվեգրված ծախսեր	131,225	97,582
Վարկային կորստի պահուստ	45,088	62,155
Այլ	73,090	19,704
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ ԱԱ-ով	7,353,703	9,214,843
